ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱՏԱՐՄԱՆ
ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ԵՔ-ԳՀԽԱՇՁԲ-21/52-1

ք. Երևան «04» օգոստոս 2021 թ

Երևանի քաղաքապետարանը, ի դեմս աշխատակազմի գնումների վարչության պետ Է. Կիրակոսյանի, որը գործում է Երևանի քաղաքապետի 14.11.2018 թվականի թիվ 3407-Ա որոշման հիման վրա, այսուհետ «Գնորդ», մի կողմից, և ԱՐԽԻ ԹՈՒԼՍ ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Է. Խաչատրյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետ «Կատարող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է **Երևան քաղաքի Արաբկիր վարչական շրջանի Վ.Դավթյանի անվան զբոսայգում հասարակական զուգարանի կառուցման նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման խորհրդատվական** աշխատանքների կատարման պարտավորությունը (այսուհետ՝ աշխատանք)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Աշխատանքը կատարվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից կատարվող աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե կատարվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող աշխատանք.

ա) Չընդունել աշխատանքը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի աշխատանքը պայմանագրին համապատասխանող աշխատանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու աշխատանքի համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) կատարված աշխատանքը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է աշխատանքի կատարման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան կատարված աշխատանքի արդյունքը, իսկ աշխատանքի արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել աշխատանքի կատարումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

2.4.4 Նախագծային փաստաթղթերի մշակման ժամանակ նախագծողը՝

1) շինարարական ծրագրի կատարման համար օգտագործվող նյութերի և (կամ) սարքերի ու սարքավորումների տեխնիկական բնութագրերը կազմում է օրենքի 13-րդ հոդվածի պահանջներին համապատասխան,

2) ներկայացնում է կապալի օբյեկտի, դրա առանձին մասերի (կոնստրուկցիաների և այլն) և օգտագործվելիք նյութերի և (կամ) սարքերի ու սարքավորումների երաշխիքային ժամկետներին ներկայացվող նվազագույն պահանջները,

3) ներկայացնում է աշխատանքների առանձին տեսակների կատարման օրացուցային ժամանակացույցը,

4) պատվիրատուին նախագծային փաստաթղթերը ներկայացնում է հայերեն և ռուսերեն լեզուներով՝ թղթային և էլեկտրոնային տարբերակներով:

3. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե կատարված աշխատանքըկամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և սույն պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1.Պայմանագրով Կատարողի կատարման ենթակա աշխատանքի գինը կազմում է **380000** (երեք հարյուր ութսուն հազար) ՀՀ դրամ:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Աշխատանքի կատարման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն կատարված աշխատանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում աշխատանքի կատարման՝ սույն պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող աշխատանք կատարելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի **30 (երեսուն)** տոկոսի չափով:Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև աշխատանքը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված աշխատանքի գնի **0,19 (զրո ամբողջ տասնինը հարյուրերորդական)** տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են աշխատանքը կատարելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.4.1 Շինարարական աշխատանքների կատարման ընթացքում նախագծային շեղումներ առաջանալու դեպքում նախագծողը պատվիրատուին վճարում է տուգանք՝ յուրաքանչյուր արձանագրված շեղման հետևանքով առաջացած կորստի չափով: Ընդ որում՝

ա. շեղում է համարվում աշխատանքների կատարման ընթացքում սկզբնական նախագծի տասը տոկոսը գերազանցող լրացուցիչ ծավալի աշխատանքների ի հայտ գալը, իսկ տուգանքի չափը հավասար է լրացուցիչ ծավալի աշխատանքների արժեքի քսանհինգ տոկոսին,

բ. կորուստ են համարվում նախագծային այնպիսի շեղումները, որոնք հանգեցնում են փաստացի կատարված աշխատանքների փոփոխմանը (քանդման, վերակառուցման և այլն) և լրացուցիչ աշխատանքների կատարմանը, իսկ տուգանքի չափը հավասար է կորստի հանգեցրած՝ փաստացի կատարված աշխատանքների արժեքի հիսուն տոկոսին:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ(ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված Համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել:Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

7.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսան ապայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե աշխատանքների կատարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարմանժամկետըկարողէերկարաձգվելմեկանգամմինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքովկամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:7.12 Պայմանագրիկապակցությամբծագածվեճերըլուծվումենբանակցություններիմիջոցով:Համաձայնություն ձեռքչբերելուդեպքումվեճերըլուծվումեն ՀՀ դատարաններում:

7.10 Պայմանագիրը կազմված է 10 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.11 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

7.12 Սույն պայմանագրով նախատեսված Պատվիրատուի իրավունքներն ու պարտականությունները ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով իրականացնում է Երևան քաղաքի Արաբկիր վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմը:

8.ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
Երևանի քաղաքապետարան	«ԱՐԽԻ ԹՈՒԼՍ » ՍՊԸ
ք.Երևան 0015, Արգիշտիի փ. 1	Հասցե՝ ՀՀ Արարատի մարզ գ. Ոստան, Երևանյան 13
Կենտրոնական գանձապետարան	Բանկ «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ
Հ/Հ 900032313042	Հ/Հ 1550015546686660
ՀՎՀՀ 02593108	ՀՎՀՀ 04234306
Է. Կիրակոսյան_____ (ստորագրություն)	Է. Խաչատրյան_____ (ստորագրություն)
Կ.Տ	Կ.Տ

Հավելվ
« » օգոստոս 2021 թ. կնք
ԵՔ-ԳՀԽԱՇՁԲ-21/52-1 ծածկագրով պայմանագ

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

N	CPV	Աշխատանքի տեխնիկական բնութագիրը	Չ/Մ	ընդհանուր գինը	կատարման	
					հասցեն	ժամկետը
2	71241200/231	**Արաբկիր վարչական շրջանի Վ.Դավթյանի անվան զբոսայգում հասարակական զուգարանի կառուցման աշխատանքների համար առաջադրվում է՝**	դրամ	**380000**	Արաբկիր վարչական շրջան	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից 60-րդ օրացուցային օրը ներառյալ
		գործող շինարարական նորմերի պահանջների համաձայն կազմել **նախագծանախահաշվային** փաստաթղթերը: Համաձայն Երևանի ավագանու առ 16.03.2012թ N 405-Ն որոշման նախագծում ներկայացնել շինհրապարակի ժամանակավոր առանձնացման և տեղեկատվական վահանակների տեղադրման կետերը:				
		Տեխնիկական առաջադրանք				
		1. Կազմել տեխնիկական եզրակացություն նշելով հասարակական զուգարանի այգու տարածգում տեղակայելու նպատակահարմար հատվածը (խորհրդակցելով վարչական շրջանի ղեկավարի հետ) և կցելով լուսանկարներ ներկայացնել տեղեկատվություն նախընտրած տարածքի փաստացի իրավիճակի մասին:				
		Տեխնիկական եզրակացությունում արտահայտել.				
		Հարակից տարածքում անցնող ներքին ենթակառուցվածքների, գազատար խողովակների և էլեկտրական լարերի առկայության, ծառերի մասին տեղեկատվությունը:				
		Կառուցման աշխատանքների ծավալների և օգտագործվող նյութերի մասին առաջարկություն:				
		Նախատեսվող ջերմամեկուսացման նյութերի մասին առաջարկություններ:				
		Կառուցվող խմելու ջրի և կոյուղու խողովակաշարի մասին առաջարկություններ				
		Նախատեսվող փականների տեսակների և տեղադրման մասին առաջարկություն				
		Ներկայացնել տեղազննման ընթացքում հայտնաբերված բոլոր տիպի լրացումների և փոփոխությունների առաջարկություններ:				
		2. Կառույցին ներկայացվող պահանջներ՝				
		ա/ Տղամարդկանց և կանացի հատվածների մուտքերը պետք է լինեն կառույցի տարբեր կողմերից՝ ընդ որում երկու մուտքերը պետք է հարմարեցված լինեն հաշմանդամություն ունեցող անձանձ համար:				
		բ/ Երեք խցիկ կանացի և երեք խցիկ տղամարդկանց հատվածներում՝ ընդ որում՝ մեկ խցիկում տեղադրվելու է զուգարանակոնք, երկրորդում՝ ասիական տիպի զուգարանակոնք և երրորդը նախատեսված է լինելու հաշմանդամություն ունեցող անձանց համար:				

		գ/ Տղամարդկանց և կանացի հատվածներում նախատեսվում է՝ մեկական հարդարանքի սենյակ, մեկական նախասրահ՝ յուրաքանչյուրում երեք հատ լվացարան, երեք հատ 0.60մx0.60մ չափերի հայելի, երեք հատ էլեկրական սնուցման վարդակ, երեք հատ ձեռքերի չորացման սարք (իրենց առանձնացված էլեկտրական վարդակներով): Տղամարդկանց նախասրահում նաև երեք հատ միզարան: Յուրաքանչյուր լվացարանի մոտ նախատեսել հեղուկ օճառի մեկական դիսպենսեր (դոզատոր):				
		դ/ Յուրաքանչյուր խցիկի ներքին չափսը պետք է լինի 1,10մx1,50մ: Հաշմանդամների համար նախատեսված խցիկի ներքին չափսը՝ 1,90մx2.20մ (նախատեսել սահմանափակ կարողությամբ անձանց համար անհրաժեշտ բոլոր սարքավորումները): Յուրաքանչյուր խցիկում նախատեսել վերնազգեստի համար կախիչներ՝ ամուր նյութից:				
		ե/ Զուգարանի արհեստական (էլեկտրական) լուսավորումը նախատեսել շարժման սենսորների միջոցով: Շարժման մեկական սենսոր նախատեսել յուրաքանչյուր սրահի և խցիկի համար: Բնական լուսավորումը և օդափոխությունը ապահովելու նպատակով նախատեսել բացվող ֆրամուգաներ: Ծորակները նույնպես նախատեսել շարժման սենսորային:				
		զ/ Արտաքին և ներքին դռռները նախատեսել բարձրորակ պլաստմասե սպիտակ գույնի:				
		թ/ Ներքին բոլոր պատերը 1,6 բարձրությամբ սալիկապատել (ներկայացնել սալիկների 3 գնային տարբերակներ):				
		ժ/ Ջեռուցումը իրականացվելու է էլեկրական ջեռուցիչներով:				
		ի/ Նախատեսել օդափոխության պարզ համակարգ:				
		լ/ Կառույցի արտաքին պատերը պետք է լինեն բարձրորակ (ճակատային) բլոկերից:				
		խ/ Կառույցի ծածկը նախատեսել մոնոլիտ / երկաթբետոնից:				
		ծ/ Այգու ընդհանուր արտաքին տեսքը պահպանելու նպատակով կտուրը պետք է լինի մետաղակղմինդրից (գույնը՝ մուգ շագանակագույն):				
		3. Տեխնիկական առաջադրանքին համաձայն ներկայացնել				
		ա/ Հասարակական զուգարանի կառուցման աշխատանքների էսքիզ-նախագիծ՝ նախնական համաձայնության:				
		բ/ Հասարակական զուգարանի կառուցման աշխատանքների թերությունների ակտ՝ նախնական համաձայնության:				
		գ/ Առաջադրանքի համաձայն կազմել հասարակական զուգարանի կառուցման աշխատանքների նախագծա-նախահաշվային աշխատանքների փաստաթղթեր:				
		դ/ նախահաշիվ-ծավալաթերթում նախատեսել շինաղբի տեղափոխում 12 կմ հեռավորության վրա և (անհրաժեշտության դեպքում) սևահողի մատակարարում 35 կմ հեռավության վրա գտնվող վայրից:				
		4. Ներկայացնել օբեկտի, դրա առանձին մասերի /կոնստրուկցիաներ և այլն/ և օգտագործվող նյութերի երաշխիքային ժամկետներին ներկայացվող նվազագույն պահանջները:				
		5. Նախագծերը ներկայացնել 7 օրինակից՝				

		6. Նախագծանախահաշվային փոստաթղթերի կազմման աշխատանքների ավարտից հետո նախագծերը համաձայնեցնել Երևանի Արաբկիր վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմի Քաղաքաշինության և հողօգտագործման և Կոմունալ տնտեսության և բազմաբնակարան շենքերի կառավարման մարմինների հետ աշխատանքների կազմակերպման բաժինների հետ:				
		7. Նախագծերը և նախահաշվարկները ներկայացնել նաև էլեկտրոնային կրիչով կամ ուղարկել պայմանագրում նշված էլեկտրոնային հասցեին՝ նախագիծը .pdf իսկ նախահաշիվը .xls (excel) ձևաչափերով:				
		8. Նախագծերը ներկայացնել նաև ռուսերեն տարբերակով				
		9. Աշխատանքների դիմաց վճարումը կատարվելու է փորձաքննության եզրակացություն տրամադրվելուց հետո:				

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
Երևանի քաղաքապետարան
ք.Երևան 0015, Արգիշտիի փ. 1
Կենտրոնական գանձապետարան
Հ/Հ 900032313042
ՀՎՀՀ 02593108

Է. Կիրակոսյան----------
(ստորագրություն)
Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ
«ԱՐԽԻ ԹՈՒԼՍ » ՍՊԸ
Հասցե՝ ՀՀ Արարատի մարզ գ. Ոստան, Երևանյան 13
Բանկ՝ «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ
ՀՀ 1150015516686660
ՀՎՀՀ 04234306

Է. Խաչատրյան ----------
(ստորագրություն)
Կ.Տ

Հավելված N 2
« » օգոստոս 2021 թ. կնքված
ԵՔ-ԳՀԽԱՇՁԲ-21/52-1 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀդրամ

Աշխատանքի														
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	Գնումների պլանով նախատեսված միջանցիկծածկագիրը՝ ըստԳՄԱդասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2021 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
2	71241200/231	Արաբկիր վարչական շրջանի Վ.Դավթյանի անվան զբոսայգում հասարակական զուգարանի կառուցման նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման խորհրդատվական աշխատանքների ձեռքբերում								285000	285000	380000	380000	380000	380000

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
Երևանի քաղաքապետարան
ք.Երևան 0015, Արգիշտիի փ. 1
Կենտրոնական գանձապետարան
Հ/Հ 900032313042
ՀՎՀՀ 02593108

Է. Կիրակոսյան----------
(ստորագրություն)
Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ
«ԱՐԽԻ ԹՈՒԼՍ » ՍՊԸ
Հասցե՝ ՀՀ Արարատի մարզ գ. Ոստան, Երևանյան 13
Բանկ՝ «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ
ՀՀ 1150015516686660
ՀՎՀՀ 04234306

Է. Խաչատրյան ----------
(ստորագրություն)
Կ.Տ.

«ԱՐԽԻ ԹՈՒԼՍ»
"АРХИ ТУЛС"
"ARCHI TOOLS"
04234306

Հավելված 3
« » օգոստոս 2021 թ. կնքված
ԵՔ-ԳՀԽԱՇՁԲ-21/52-1 ծածկագրով պայմանագրի

Պայմանագրիկողմ

_____

_____

գտնվելուվայրը _____
հհ _____
հվհհ _____

Պատվիրատու

_____

_____

գտնվելուվայրը _____
հհ_____
հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻԿԱՄԴՐԱՄԻՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « »20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
ՊայմանագրիշրջանակներումՊայմանագրի կողմը կատարել է հետևյալ աշխատանքները՝

N	Կատարվածաշխատանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Աշխատանքը հանձնեց

_____
ստորագրություն

_____
ազգանուն, անուն

Կ.S.

Աշխատանքը ընդունեց

_____
ստորագրություն

_____
ազգանուն, անուն

Կ.S.

Հավելված 3.1
« » օգոստոս 2021 թ. կնքված
ԵՔ-ԳՀԽԱՇՁԲ-21/52-1 ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ_____-ի(այսուհետ՝ Պատվիրատու) և_____-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը
(այսուհետ՝ Կատարող) միջև20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված աշխատանքները.

Աշխատանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

«ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ
ՀՀ, ք. Երևան, Նալբանդյան 48
Հեռախոս՝ 374 10 592020
Ֆաքս՝
Էլ. փոստ՝

Տպված է՝ 03/08/2021 15:38 (UTC+04:00□

Բյուջետային փոխանցում N 000041

Ամսաթիվ	03/08/2021	Նույնացուցիչ	efb54411-3fb9-4e9c-91d0-fc9699a00fc5
Հաշիվ	Շահառուի հաշիվ	Գումար	
1150015516686660	900008000698	AMD	57,000.00
Վճարողի անվանում	ԱՐԽԻ ԹՈՒԼՍ ՍՊԸ		
Վճարողի բանկ	«ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ		
ՀՎՀՀ	04234306		
Տարածաշրջանի/ՀՏ կոդ	91		
Շահառուի անվանում	Գնումների որակավորման ապահովում՝ կանխիկ փողի ձեւով, ՀՀ ֆինանսների նախարարություն		
Գումարը բառերով	Հիսունյոթ հազար դրամ		
Նպատակ	ԵՔ-ԳՀԽԱՇՁԲ-21/52-1 ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄ,«ԱՐԽԻ ԹՈՒԼՍ» ՍՊԸ ՀՎՀՀ 04234306		

Ստորագրող	Edgar Khachatryan
Ստորագրության կարգ	I, II
Ամսաթիվ	03/08/2021 15:30:52.880
Սարքի անվանում	SMS
Սարքի սերիալ N	37477119180
Ստորագրման տվյալ	SMS
Ստորագրություն	15578

Կատարված է □անկի կողմից

«ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ
ՀՀ, ք. Երևան, Նալբանդյան 48
Հեռախոս՝ 374 10 592020
Ֆաքս՝
Էլ. փոստ՝

Տպված է՝ 03/08/2021 15:38 (UTC+04:00□

Բյուջետային փոխանցում N 000042

Ամսաթիվ	03/08/2021	Նույնացուցիչ	1135146a-d046-4449-9ebe-8577d801a308
Հաշիվ	Շահառուի հաշիվ	Գումար	
1150015516686660	900008000664	AMD	38,000.00
Վճարողի անվանում	ԱՐԽԻ ԹՈՒԼՍ ՍՊԸ		
Վճարողի բանկ	«ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ		
ՀՎՀՀ	04234306		
Տարածաշրջանի/ՀՏ կոդ	91		
Շահառուի անվանում	ՀՀ ֆինանսների նախարարություն		
Գումարը բառերով	Երեսունութ հազար դրամ		
Նպատակ	ԵՋ-ԳՀԽԱՇՁԲ-21/52-1 ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՊԱՀՈՎՈՒՄ,«ԱՐԽԻ ԹՈՒԼՍ» ՍՊԸ ՀՎՀՀ 04234306		
Ստորագրող	Edgar Khachatryan		
Ստորագրության կարգ	I, II		
Ամսաթիվ	03/08/2021 15:32:27.703		
Սարքի անվանում	SMS		
Սարքի սերիալ N	37477119180		
Ստորագրման տիպ	SMS		
Ստորագրություն	57778		

Կատարված է բանկի կո□մից